



e-Guillotine

բիզնես գործընթացների և դրանք սահմանող իրավական ակտերի
ՇՏԵՄԱՐԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

**Նախարարությունների, գործակալությունների
և շահագրգռված այլ անձանց համար**



Բովանդակություն

1. Ներածություն	2
2. Մեկնարկ	3
3. Մուտք e-Guillotine համակարգ	4
4. Վերանայման համար իրավական ակտի ընտրությունը.....	6
5. Վերանայման ստուգաթերթ լրացնելը	8
6. Ընտրված իրավական ակտի վերաբերյալ հաղորդագրություն թողնելը.....	10

1. Ներածություն

Իրավական ակտերի (ԻԱ) և բիզնես գործընթացների (ԲԳ) պարզեցման գործընթացը ներառում է հիմնական երկու փուլ՝

- գույքագրում,
- վերանայում:

Օրենսդրության կարգավորման համակարգչային ծրագիրը՝ e-Guillotine-ը, ստեղծվել է գույքագրման և վերանայման փուլերի աշխատանքները համակարգելու նպատակով:

ՀՀ կառավարության աշխատակազմի Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոնի (ՕԿԱԿ) փորձագետներն իրականացրել են իրավական ակտերի գույքագրումը, այսինքն՝ հետազոտել, ուսումնասիրել, հավաքագրել և մուտքագրել են այն բոլոր իրավական ակտերը, որոնք համահունչ են օրենսդրության կարգավորման ծրագրի նպատակներին: Յուրաքանչյուր իրավական ակտ մուտքագրվել է e-Guillotine համակարգում որպես առանձին գործ:

Իրավական ակտերի վերանայման փուլում կոչ է արվում բոլոր մասնակից նախարարություններին, գործակալություններին, շահագրգռված անձանց, բիզնեսներին և լայն հասարակությանը վերանայել e-Guillotine [շտեմարանում](#) մուտքագրված իրավական ակտերը, ուսումնասիրել իրավական ակտերից բխող հնարավոր խնդիրները և ներկայացնել առաջարկություններ:

Օրենսդրության կարգավորման ծրագրով նախատեսված իրավական ակտերի գույքագրումից բացի օգտատերները ունեն յուրաքանչյուր իրավական ակտի



համար վերանայման գործ ստեղծելու հնարավորություն՝ ակտերը բարելավելու նպատակով:

Անհրաժեշտ է նաև նշել, որ **գույքագրման գործընթացը պետք է լինի շարունակական՝** գույքագրման շտեմարանը շարունակաբար թարմացվելու է ամբողջ նախագծի ընթացքում: Փորձը ցույց է տալիս, որ պետական բազմաթիվ մարմիններ ամբողջական տեղեկատվություն չունեն իրենց ոլորտը կարգավորող իրավական ակտերի և նրանց հետ կապված բիզնես գործընթացների մասին: Այդ իսկ պատճառով ՕԿԱԿ-ի լրացուցիչ աշխատանքներից մեկն է գտնել տվյալ ոլորտը կարգավորող բոլոր իրավական ակտերը՝ վարչական և կարգավորում պարունակող բոլոր իրավական ակտերի ամբողջական և կենտրոնացված էլեկտրոնային շտեմարան ստեղծելու նպատակով: ՕԿԱԿ-ը նաև կստանա արտաքին աջակցություն. նախագծի ծավալվելուն զուգընթաց բազմաթիվ հաստատություններ, գործընկերներ, ընկերություններ և անհատներ կտեղեկացվեն նախագծի մասին, կմեծանան տեղեկատվությունը ստուգելու հնարավորությունները, և ՕԿԱԿ-ը լրացուցիչ տեղեկություններ կստանա էլեկտրոնային շտեմարանում պակասող իրավական ակտերի կամ թերի տեղեկատվության վերաբերյալ:

2. Մեկնարկ

E-Guillotine-ը արդյունավետ օգտագործելու համար խորհուրդ է տրվում օգտվել հետևյալ ինտերնետային բրաուզերներից որևէ մեկից՝

- Internet Explorer 9 կամ ավելի նոր տարբերակ
- Mozilla Firefox
- Chrome

E-Guillotine-ը ինտերնետային ծրագիր է: Ծրագրից օգտվելու և իրավական ակտի (հետագայում նաև Բիզնես գործընթացների) վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու համար օգտատիրոջն անհրաժեշտ է համակարգիչ, ինտերնետ և ծրագրից օգտվելու իրավասություն: Ծրագիրը հասանելի է ամենուրեք և ցանկացած ժամանակ, եթե օգտատիրոջն տրվել է ծրագրից օգտվելու իրավասություն: Իրավասությունը ներառում է հետևյալը՝

- Կայք՝ www.e-guillotine.am
- Օգտատիրոջ անուն
- Գաղտնաբառ



3. Մուտք e-Guillotine համակարգ


ՕԿԱԿ-ը յուրաքանչյուր հանրային կառավարման մարմնի տրամադրում է անհատական օգտատիրոջ անուն և գաղտնաբառ: Սույն տեղեկատվությունը պետք է գաղտնի լինի և չպետք է տրամադրվի մարմնի այլ աշխատակիցների, քանի որ յուրաքանչյուր մարմին իր բոլոր առաջարկությունները և ստուգաթերթերը ներկայացնելու է ՕԿԱԿ-ին e-Guillotine-ի միջոցով: Սա անհրաժեշտ է իրավասու անձանց կողմից մուտքագրվող տեղեկատվության վավերականությունն ապահովելու համար:

Իրավական ակտերի կամ բիզնես գործընթացների վերաբերյալ առաջարկություններ անելու համար անհատները, ընկերությունները, ՀԿ-ները և շահագրգռված այլ անձինք պետք է գրանցվեն www.e-guillotine.am կայքում և մուտք գործեն համակարգ՝ ծրագրի կողմից տրամադրված օգտատիրոջ անվան և ծածկագրի միջոցով:

Համակարգ մուտք գործելու համար անհրաժեշտ է սեղմել կայքի վերևի աջ անկյունում գտնվող «Մուտք» կոճակը:



Մուտքագրեք Ձեր օգտատիրոջ անունը և գաղտնաբառը համապատասխան դաշտերում.





Եթե մուտքագրվել է սխալ օգտատիրոջ անուն կամ գաղտնաբառ, ծրագիրը կխնդրի մուտքագրել ճշգրիտ օգտատիրոջ անունը և գաղտնաբառը:

Եթե մոռացել եք գաղտնաբառը, սեղմեք «Գաղտնաբառը մոռացել եմ» կոճակը եւ հետեւք հրահանգներին:

Ծրագիր բարեհաջող մուտք գործելուց հետո էկրանին կհայտնվի հետևյալը՝

The screenshot shows the e-Guillotine website interface. At the top, there is a navigation bar with the logo and the text "e-Guillotine բիզնես գործընթացների և դրանք կարգավորող իրավական ակտերի ՇՏԵՄԱՐԱՆ". To the right, it says "Մուտք | Գրանցում | EN". Below the navigation bar, there are tabs for "Բիզնես գործընթացներ", "Իրավական ակտեր", "Կարգավորող մարմիններ", "Ֆորում", and "Հետադարձ կապ". The date "13/05/2013" is displayed on the right. The main content area is divided into two search sections: "Բիզնես գործընթաց" and "Իրավական ակտ". Each section has a search box and a "Փնտրել" button. To the right, there is a list of search results under the heading "ԱՄԵՆԱՓՆՏՐՎԱԾ". The list includes several entries with red arrows pointing to the left, such as "test", "1072", "հաստատագրված", "fdfsdfs", "եկամտային հարկի մասին", "ԻԱ-ԱԵՆ-03052013170339:", "Աշխատատեղերում էլեկտրատատիկ դաշտի լարվածության հիզիներկ նորմ", "ԻԱ-ԷԲՂ-03052013150156:", "Անխտանգության պահանջները մայրուղային գազատարներում տեխնիկական...", "ԻԱ-ԷԲՂ-03052013145709:", "Էլեկտրական ենթակառուցվածքի հարողաբաշխման վերաբերյալ տեխնիկական կան", "ԻԱ-ԷԲՂ-03052013122210: 1000 Վ-ից բարձր լարման ֆեիկարկման էլեկտրական ապարատներին ներկայացվ...", "ԻԱ-ԷԲՂ-03052013121652:", "Էներգետիկ փորձաքննության իրականացման կարգը և Հայաստանի Հանրապետության Կորե'նք միասին Let's Cut Together www.regulations.am".



4. Վերանայման համար իրավական ակտի ընտրությունը

Իրավական ակտ ընտրելու համար (հետագայում նաև բիզնես գործընթաց ընտրելու դեպքում) օգտատերը պետք է պարզապես օգտվի կայքում տեղադրված որոնման համակարգից:

Իրավական ակտ կամ բիզնես գործընթաց փնտրելու համար անհրաժեշտ է համապատասխան դաշտում մուտքագրել անվանումը կամ առնչվող հիմնաբառերը՝ վերջում ավելացնելով *: Իրավական ակտ փնտրելիս կարելի է մուտքագրել նաև իրավական ակտի համարը:

Օգտատերը կարող է ընտրել որևէ իրավական ակտ՝ սեղմելով իրավական ակտի վրա «Անվանում» սյունակում:

The screenshot shows the e-Guillotine search interface. At the top, there is a search bar with the text "Իրավական ակտ փնտրել" (Search legal act) and a "Փնտրել" (Search) button. Below the search bar, there is a table of search results. The table has four columns: "#", "Անվանում" (Name), "Համար" (Number), and "Ոլորտ" (Category). The results are as follows:

#	Անվանում	Համար	Ոլորտ
1.	Փխտանիտագուտայան և վերձակերտարուկտորական աշխատանքների դասակարգման (նավաստության) մասին	ԻԱ-ՏՆ-30042013143617	Կառավարության որոշում
2.	Հողի հարկի մասին	ԻԱ-ՏՆ-30032013225959	Օրենք
3.	Հայաստանի Հանրապետության վտանգավոր և այլ թայմաների ներմուծումը, արտահանումը և Հանրապետության տարածքով տարանցիլի վախճարումը կարգավորելու մասին	ԻԱ-ՏՆ-29032013161742	Կառավարության որոշում
4.	ՀՀ փայտանյութի և դրանից պատրաստված որոշ ապրանքների արտահանման կարգը սահմանելու մասին	ԻԱ-ՏՆ-29032013153028	Կառավարության որոշում
5.	Հանրային ծառայությունների մատուցման եկֆակտուցվածքներ հանձնելու համաձայնությունները (պայմանագրերը) հարկման նպատակով որպես կոնցեսիան պայմանագիր որակելու ըստանիշներն ու ընթացակարգը սահմանելու մասին	ԻԱ-ՏՆ-29032013152239	Կառավարության որոշում
	ՀՀ պաշտպանության նախարարության և Եվրոպայում Անդրիկայի Միացյալ նախնների զամացային զորքերի և 7-րդ բանակի		

Էկրանին կհայտնվի իրավական ակտի գործը.



e-Guillotine
բիզնես գործընթացների և դրանք կարգավորող իրավական ակտերի ՇՏԵՄԱՐԱՆ

Դուրսգրում | Իմ պրոֆիլը | Իմ էջանիշը | Իմ ծանուցումները | EN

Բիզնես գործընթացներ | **Իրավական ակտեր** | Կարգավորող մարմիններ | Ֆորում | Հետադարձ կապ | 13/05/2013

Հայաստանի Հանրապետություն վտանգավոր և այլ թափոնների ներմուծումը, արտահանումը և Հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրումը կարգավորելու մասին

Իրազեկում թարմացման դեպքում
 Էջանշիր
 Ֆորում

Ինֆո	Առնչվող բիզնես գործընթաց [0]	Տարբերակներ [1]	Մեկնաբանություններ
Լիազորված պետական մարմին:	ՀՀ ֆինանսների նախարարություն		
Իրավական ակտ համարը:	97		
Իրավական ակտ բնույթ:	Նորմատիվ		
Շնչունման օր:	08 Դեկտեմբերի 1995		
Գործերի կարգավիճակ:	Գործում է		
Իրավական ակտ ազդեցության դաշտ:	Բիզնեսները		
Հրում ապրուրին:	ARLIS		
Իրավական ակտը պարունակում է բիզնես գործընթաց:	<p>1. Հայաստանի Հանրապետություն թափոնների ներմուծումը, արտահանումը և հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրումը կարգավորելու նպատակով՝</p> <p>1) ընդարձակել թափոնների ՀՀ ներմուծման արգելքի սահմանում՝ դրանց պահեստավորման և թափան նպատակով:</p> <p>2) Հայաստանի Հանրապետություն և Հայաստանի Հանրապետության տարածքով վտանգավոր թափոնների ներմուծման և տարանցիկ փոխադրման արգելքի սահմանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված՝ Հայաստանի Հանրապետության արգելված վտանգավոր թափոնների ցանկի:</p> <p>2. Հայաստանի Հանրապետություն վտանգավոր և այլ թափոնների ներմուծման, հանրապետությունից արտահանման և հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրման կարգի սահմանում:</p>		

Բիզնես գործընթաց լիցենզիա այո

Մեկնաբանություններ անելու համար անհրաժեշտ է սեղմել գործում առկա «Մեկնաբանություններ» հղումը:

e-Guillotine
բիզնես գործընթացների և դրանք սահմանող իրավական ակտերի ՇՏԵՄԱՐԱՆ

Դուրսգրում | Իմ պրոֆիլը | Իմ էջանիշը | Իմ ծանուցումները | EN

Բիզնես գործընթացներ | **Իրավական ակտեր** | Կարգավորող մարմիններ | Ֆորում | Հետադարձ կապ | 28/06/2013

ՀՀ փայտանյութի և դրանից պատրաստված որոշ ապրանքների արտահանման կարգը սահմանելու մասին

Իրազեկում թարմացման դեպքում
 Էջանշիր
 Ֆորում

Լրացրեք իրավական ակտի վերանայման ստուգաթերթը | **Ավելացրեք Ձեր հաղորդագրությունը**

Իրավական ակտի վերանայման ստուգաթերթի օգտագործողի ուղեցույց

Այնուհետև անհրաժեշտ է սեղմել «Ավելացրեք Ձեր հաղորդագրությունը» կամ «Լրացրեք իրավական ակտի վերանայման ստուգաթերթը», որից հետո կբացվի Վերանայման ստուգաթերթը:



Մեկնաբանություններ անելու համար անհրաժեշտ է գրանցված լինել եւ մուտք գործել համակարգ:

5. Վերանայման ստուգաթերթ լրացնելը

Իրավական ակտի վերանայման ստուգաթերթը հնարավոր է ամբողջությամբ խմբագրել: Այն պարունակում է իրավական ակտի (հետագայում նաև բիզնես գործընթացի) վերանայման համար անհրաժեշտ տեղեկատվությունը:

Մանրամասն կարդացեք վերանայման ստուգաթերթը, լրացրեք մոխրագույնով նշված բոլոր դաշտերը և տրամադրեք հնարավորին շատ տեղեկատվություն Ձեր վերանայումը փորձագետի համար հասկանալի դարձնելու համար:

<p>հստակ է:</p> <p>Եթե պատասխանը (բ)-ն է, պետք է իրավական ակտի գործողությունը դադարեցնել:</p> <p>Եթե պատասխանը (ա) է, նպատակը դեռ արդարացված է՝ հաշվի առնելով ՀՀ ներկա տնտեսական պայմանները:</p> <p>գ. Այո <input type="checkbox"/></p> <p>դ. Ոչ <input checked="" type="checkbox"/></p> <p>Եթե պատասխանը ՈՉ է պետք է իրավական ակտի գործողությունը դադարեցնել: Գնալ Բաժին V և առաջարկել իրավական ակտի գործողությունը դադարեցնել:</p> <p>Եթե պատասխանը ԱՅՈ է, անցեք 8-րդ հարցին:</p>	<p>բ. Նպատակը հայտնի չէ, արդիական չէ կամ հստակ չէ</p> <p>քաղաքականության նպատակներին, եթե դրանք հիմնավորվելու են որպես անհրաժեշտություն Հայաստանի ապագա կարիքների համար: Թիրախային արդյունքները պետք է հստակ սահմանված լինեն: Եթե նպատակները հստակ չեն, ապա հավակնությունը քիչ է, որ իրավական ակտի անհրաժեշտությունը կա:</p> <p>Հստակ արդյունքի օրինակ. Այս իրավական ակտը նախատեսված է երաշխավորելու, որ հաճախորդներին վաճառած հացի արտադրությունը սանիտարական պայմաններին համապատասխան է:</p>	<p>քաղաքականության նպատակներին, եթե դրանք հիմնավորվելու են որպես անհրաժեշտություն Հայաստանի ապագա կարիքների համար: Թիրախային արդյունքները պետք է հստակ սահմանված լինեն: Եթե նպատակները հստակ չեն, ապա հավակնությունը քիչ է, որ իրավական ակտի անհրաժեշտությունը կա:</p> <p>Հստակ արդյունքի օրինակ. Այս իրավական ակտը նախատեսված է երաշխավորելու, որ հաճախորդներին վաճառած հացի արտադրությունը սանիտարական պայմաններին համապատասխան է:</p>
<p>8. Իրավական</p>	<p>Կան արդյոք փաստեր, որ այս իրավական ակտն իրականում հասել է իր նպատակին: Առում՝ օ առումունենեո ժաստաթթթթթթթթթթե են:</p>	<p>Այս կետի նպատակն է աստուե. թե առում՝ օ աս</p>

Աշխատանքի ընթացքում կարող եք ցանկացած ժամանակ տպել նույնիսկ դեռ աշխատանքային վիճակում գտնվող եւ ՕԿԱԿ-ին չհանձնած վերանայման ստուգաթերթը՝ սեղմելով «Տպել» կոճակը:

Վերանայման ստուգաթերթը լրացնելուց հետո անհրաժեշտ է սեղմել փաստաթղթի ներքևում գտնվող «Ուղարկել եւ դուրս գալ» կոճակը: ՕԿԱԿ-ի փորձագետները կստանան և ընթացք կտան տվյալ տեղեկատվությանը:



<p><input type="radio"/> Չի համապատասխանում սահմանիչներին և պետք է գործողություն դադարեցնել</p> <p><input type="radio"/> Ամբողջությամբ</p> <hr/> <p><input type="radio"/> Մասնակիորեն (ի՞նչն ան դրույթները, որոնց գործողությունը պետք է դադարեցնել):</p> <hr/> <p><input type="radio"/> Նեխկաբան անօրինական է. քանի որ հրապարակված չէ "Պաշտոնական Տեղեկագրում, բայց անհրաժեշտ է համաձայն Ստուգաթղթի 2-րդ բանկի: Նշել իրավական ակտի օրինականացման թիրախային ամսաթիվը և պատասխանատու անձին:</p> <hr/> <p>և իրավական ակտը թիվն ու միջավայրին նպատակը դարձնելու համար անհրաժեշտ վերանայումները:</p> <hr/>	
---	--

Իրավական ակտի վերանայման ստուգաթիղթ

22 կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրի իրականացման գրասենյակ պետական կինոսրահի

Վայրկյանների ընթացքում լրացված ստուգաթերթը կհանձնվի համակարգին: Հաջորդող հաղորդագրությունում առկա «Ներբեռնել PDF ֆայլը» ակտիվ հղումի միջոցով կարող եք ներբեռնել եւ անձնական համակարգչում պահպանել լրացված ստուգաթերթը.

e-Guillotine

բիզնես գործընթացների և դրանք սահմանող իրավական ակտերի
ՇՏԵՄԱՐԱՆ

Դուրսգրում | Իմ պրոֆիլը | Իմ էջանիշը | Իմ ծանուցումները | EN

Բիզնես գործընթացներ
Իրավական ակտեր
Կարգավորող մարմիններ
Ֆորում
Հետադարձ կապ

28/06/2013

22 փայտակույթի և դրանից պատրաստված որոշ ապրանքների արտահանման կարգը սահմանելու մասին

Ինֆո
Առնչվող բիզնես գործընթաց [0]
Տարբերակներ [1]
Մեկնադրություններ

Շտրիակալության մեկնաբանության համար: Մեկնաբանությունը կայքում կտեղադրվի մեր կողմից հաստատվելուց հետո:

Ներբեռնել PDF ֆայլը

Լրացրեք իրավական ակտի վերանայման ստուգաթերթը

Ավելացրեք Ձեր հաղորդագրությունը

Իրավական ակտի վերանայման ստուգաթերթի օգտագործողի ուղեցույց

← Իրագրվում թարմացման դեպքում

← Էջանիշի

← Ֆորում



6. Ընտրված իրավական ակտի վերաբերյալ հաղորդագրություն թողնելը

Եթե ցանկանում եք իրավական ակտը մեկնաբանել ոչ թե հաստատված ստուգաթերթի միջոցով, այլ ազատ հաղորդագրությամբ, սեղմեք «Ավելացրեք Ձեր հաղորդագրությունը» կոճակը:

The screenshot shows the e-Guillotine interface. At the top, there's a navigation bar with the logo and menu items: 'Բիզնես գործընթացներ', 'Իրավական ակտեր', 'Կարգավորող մարմիններ', 'Ֆորում', 'Հետադարձ կապ'. The date '28/06/2013' is on the right. Below the navigation, there's a breadcrumb trail: 'Ինժն Առեջնող բիզնես գործընթաց [2] Տարբերակներ [1] Մեկնաբանություններ'. Two buttons are visible: 'Ավելացրեք իրավական ակտի վերանայման ստուգաթերթը' and 'Ավելացրեք Ձեր հաղորդագրությունը'. A sidebar on the right contains icons for 'Իրավական ակտերի վերանայման ստուգաթերթը', 'Էջանշիք', and 'Ֆորում'. The main content area has a warning message: 'Իրավական ակտի վերանայման ստուգաթերթի օգտագործողի ուղեցույց'. Below it is a text box with a warning: 'Արգելվում է տեղադրել թեմային չվերաբերող մեկնաբանություններ, գովազդային նյութեր, վիրավորանքներ եւ հայեարանքներ՝ Նշված կանոնները խախտողներին մուտքը համանաբց կարգելվի. Ընտրե՛՛ն հայտատու:'. The 'Հաղորդագրություն' form includes fields for 'Վերնագիր (պարտադիր)', 'Հարցրելագրություն (պարտադիր)', 'Անուն (պարտադիր)' (filled with 'Tamar Minasyan'), and 'Էլ. փոստ (պարտադիր)' (filled with 't.minasyan@regulations.am'). At the bottom of the form are 'Հանձնել' and 'Չեղարկել' buttons.

Վերջում էկրանին կհայտնվի մասնակցության համար շնորհակալություն հայտնող հաղորդագրությունը: